


ՄԱԿ-ի ԵՏՀ/ԱՀԿ <<Ջուր և առողջություն>> արձանագրություն

Նախնական թիրախների, միջոցառումների և ցուցանիշների
սահմանման, թիրախային ոլորտների առաջնահերթության
աստիճանի որոշման գործընթաց

*Արմինե Առուշանյան
ՀՀ ԷԵԲՊՆ Ջրային կոմիտե
2019թ. փետրվարի 19*



Նախնական թիրախների, միջոցառումների և ցուցանիշների սահմանման, թիրախային ոլորտների առաջնահերթության աստիճանի որոշման գործընթաց

*Թիրախային ոլորտ **III**, Խմելու ջրի հասանելիություն*

*Թիրախային ոլորտ **IV**, Ջրահեռացման հասանելիություն*

*Թիրախային ոլորտ **V** և Թիրախային ոլորտ **VI***

Ջրամատակարարման կոլեկտիվ և այլ նմանօրինակ համակարգերի արդյունավետության մակարդակը

Ջրահեռացման կոլեկտիվ և այլ նմանօրինակ համակարգերի արդյունավետության մակարդակը

- *Թիրախային ոլորտ **VII**, Ջրամատակարարման կառավարման ոլորտում ճանաչված լավագույն փորձի կիրառում*

Թիրախային ոլորտներ III և IV

Խմելու ջրի և ջրահեռացման հասանելիություն

Բնասխմուցիոնալ դաշտ

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Ջրային կոմիտե, ՀՀ բնապահպանության նախարարությունը, ՀՀ առողջապահության նախարարությունը, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, ՀՀ ֆինանսների նախարարությունը, Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը, Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը:

Ֆինանսական շրջանակները

Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագիր -Վերակառուցման և Ջարգացման Եվրոպական բանկի (ՎՋԵԲ) Եվրոպական ներդրումային բանկ և Եվրամիության/ ՀՆԾ կողմից:

Համայնքային ենթակառուցվածքների ծրագիր II, Փուլ 3 - Գերմանիայի KfW Բանկի, Եվրոպական ներդրումային բանկ, Եվրոաիության/ՀՆԾ :

Թիրախային ոլորտներ III և IV

Խմելու ջրի և ջրահեռացման հասանելիություն

Ներկայիս իրավիճակը և հեռանկարները

- 2017 թվականի հունվարի 1-ից ջրամատակարարման, ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցումն իրականացվում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից՝ 2016 թվականի նոյեմբերի 21-ին ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի (Վարձատու) և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի (Վարձակալ) միջև կնքված «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների կողմից օգտագործվող և պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի վարձակալության պայմանագրի համաձայն:

Ներկայումս գործում է մեկ սակագին՝ 1 խոր.մ-ի դիմաց 180.0 դրամ (ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 9-ի N 398 որոշում):

Համաձայն վարձակալության պայմանագրի, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից սպասարկվում է 404 բնակավայր, որից քաղաքներ՝ 45, գյուղական համայնքներ՝ 359:

Թիրախային ոլորտներ III և IV

Խմելու ջրի և ջրահեռացման հասանելիություն

«Ջրի և առողջության մասին» արձանագրության ծրագրային ոլորտներից մեկը վերաբերում է խմելու ջրի մատակարարմանը և ջրահեռացմանը հատկապես՝ դպրոցներում և առողջապահական հիմնարկներում:

Վերջին 6 տարվա ընթացքում վերանորոգվել են 342 դպրոցներ, ընդ որում գրեթե 50% նվազել է ջրամատակարարում չունեցող դպրոցների թիվը և 37%-ով ավելացել է ջրահեռացում ունեցող դպրոցների թիվը:
(<http://edu.am/>)

- Հայաստանի Հանրապետությունում «Ջրի և առողջության մասին» արձանագրության ներքո՝ «Ջրի և առողջության մասին» արձանագրության քարտուղարության և Ֆրանսիայի կառավարության ֆինանսական աջակցությամբ 2015-2016թթ. իրականացվել է ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության (ՉՉՀՀ) ինքնագնահատումը: Իրականացվել է նաև Հայաստանի Հանրապետությունում ՉՉՀՀ գործողությունների պլանի մշակմանն ուղղված ծրագիրը:

Թիրախային ոլորտներ III և IV

Խմելու ջրի և ջրահեռացման հասանելիություն

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գործում է կեղտաջրերի մաքրման 6 կայան (ԿՄԿ)՝ Երևանի «Աերացիա», Մարտունի, Վարդենիս, Գավառ, Դիլիջան և Ջերմուկ քաղաքներ:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

- Անհրաժեշտ է ապահովել ջրամատակարարման բարելավման իրականացման աշխատանքների գնահատման շարունակականությունը՝ ջրամատակարար ընկերության (ընկերությունների) սպասարկման տարածքից դուրս գտնվող բնակավայրերի համար:
- Խմելու ջրի մատակարարման ապահովության և անվտանգության տեսանկյունից առաջնային խնդիրներից է խմելու ջրի աղբյուրներին (ռեսուրսներին) մոտ գտնվող բնակավայրերի ջրահեռացումն ու կեղտաջրերի մաքրումը:
- Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի 2018-2030թթ. ռազմավարության և ֆինանսավորման ծրագրով նախատեսված առաջնահերթ գործողություններից է նաև ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման հիմնախնդիրների լուծմանն ուղղված գործողությունների իրականացումն՝ այդ թվում նորարարական տեխնոլոգիաների կիրառմամբ, ինչի արդյունքում տեղի կունենա ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման համակարգերի արդիականացում, բնապահպանական խնդիրների լուծում:

Ջրամատակարարման, ջրահեռացման կոլեկտիվ և այլ նմանօրինակ համակարգերի արդյունավետության մակարդակը

Արձանագրության 6-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջվում են սահմանել արդյունավետության այն մակարդակների համար նպատակային ցուցանիշներ և նպատակային ժամկետներ, որոնց պետք է հասնեն ջրամատակարարման և ջրահեռացման կոլեկտիվ և այլ նմանօրինակ համակարգերը:

Ինստիտուցիոնալ շրջանակները

- ՀՀ բնապահպանության նախարարությունը,
- ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Ջրային կոմիտե
- ՀՀ առողջապահության նախարարությունը, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, ՀՀ ֆինանսների նախարարությունը

Թիրախային ոլորտներ V և VI

Ջրամատակարարման, ջրահեռացման կոլեկտիվ և այլ նմանօրինակ համակարգերի արդյունավետության մակարդակը

Ֆինանսական շրջանակները

Ջրամատակարարման և ջրահեռացման բարելավման ուղղությամբ իրականացվել են և շարունակվում են իրականացվել ծրագրեր՝ Համաշխարհային բանկի, Ասիական Ջարգացման բանկի, Գերմանիայի KfW բանկի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ: *Իրականացվում է «Համայնքային ենթակառուցվածքների ծրագիր II, Փուլ 3» ծրագիրը:*

Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի 2018-2030թթ. ռազմավարության և ֆինանսավորման ծրագրում որպես թիրախ ներառված է.

- Ջրահեռացման բնագավառի հետագա զարգացմանն ուղղված հայեցակարգային մոտեցումների մշակում:
- Նպատակ 1.2՝ Առաջիկա տարիներին Երևանի «Աէրացիա» ԿՄԿ-ի ամբողջական ցիկլով կեղտաջրերի մաքրման և տիղմի մշակման փուլերի իրականացում:
- Նպատակ 1.3՝ «Ոչ թե թափոն, այլ ռեսուրս» սկզբունքի կիրառում:
- Նպատակ 1.4՝ Կեղտաջրերի մաքրման նոր կայանների կառուցմանն ուղղված աշխատանքների իրականացում:

Թիրախային ոլորտ VII Ջրամատակարարման կառավարման ոլորտում ճանաչված լավագույն փորձի կիրառում

Թիրախային ոլորտում շեշտը դրվում է պատշաճ, բայց ոչ անպայման լավագույն փորձի (և ոչ անպայման միջազգայնորեն ճանաչված) կիրառման վրա, որը կարող է լինել տեղական պայմաններին և իրականացման նպատակներին հարմարեցված:

Ջրամատակարարման կառավարման ոլորտում պատասխանատու մարմիններն են.

- ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային կոմիտե, ՀՀ բնապահպանության նախարարությունը, ՀՀ առողջապահության նախարարությունը, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, ՀՀ ֆինանսների նախարարությունը

*Թիրախային ոլորտ **VII** Ջրամատակարարման կառավարման
հիորտում ճանաչված լավագույն փորձի կիրառում*

Ներկայիս իրավիճակը և հեռանկարները

2017 թվականի հունվարի 1-ից ջրամատակարարման, ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցումն իրականացվում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից:

Վարձակալության պայմանագրի ներքո «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի սպասարկմանն են հանձնված պետական նշանակության համապատասխան ջրային համակարգերը, այդ թվում.

- շուրջ 120 ստորերկրա ջրաղբյուրներ,
- շուրջ 350 օրվա կարգավորման ջրամբարներ, 6 կեղտաջրերի մաքրման կայաններ,
- 3700 կմ ընդհանուր երկարությամբ ջրահեռացման ցանց,
- 350 կմ երկարությամբ մակերևութային ջրերի և անձրևաջրերի հեռացման համակարգ, ինչպես նաև մայրուղային ջրատարներ, պոմպակայաններ, քլորակայաններ:

Թիրախային ոլորտ V II

Ջրամատակարարման կառավարման ոլորտում ճանաչված լավագույն փորձի կիրառում

Վարձակալության պայմանագրով սահմանված են հիմնական կատարողական ցուցանիշներ (ՀԿՑ)։

- ջրամատակարարման շարունակականություն,
- մատակարարվող ջրի որակ,
- չհաշվառվող ջուր (ներառյալ առանց ջրաչափերի գրանցված սպառում)
- բաժանորդների բավարարվածություն,

Ներքին համեմատական ցուցանիշներ (ՆՀՑ)։

մաքրված կեղտաջրերի որակ, պոմպերի զննում և սպասարկում, կոյուղու զննում և սպասարկում և այլն:


*Թիրախային ոլորտ **VII** Ջրամատակարարման կառավարման ոլորտում ճանաչված լավագույն փորձի կիրառում*

Հաշվետվությունների ներկայացում՝ ամսական, եռամսյակային, կիսամյակային և տարեկան:

2019թ. սկսած վարձակալը՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն, պետք է ապահովվի առնվազն 97% ջրի որակի համապատասխանությունը գործող ստանդարտներին:

Փորձագիտական գնահատումը

Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի 2018-2030թթ. ռազմավարության և ֆինանսավորման ծրագրով նախատեսված «չսպասարկվող» բնակավայրերում (ըստ առաջնահերթության) պետություն-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) ներդրումը:



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ